# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՂՈՒՐՍԱԼԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Ղուրսալի համայնք
Հասցե-գ.Ղուրսալի (098586276)
Էլ. փոստ ghursali.lori@mta/gov.am

054/75
17.08.2017թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ
Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Ղուրսալի համայնքի ավագանու թիվ 21-Ն և 22-Ա որոշումները:

Առդիր 3 թերթ:

Ղուրսալի համայնքի
ղեկավար՝ Մ.Մինասյան

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՂՈՒՐՍԱԼԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ 06801954

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՂՈՒՐՍԱԼԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ղուրսալի համայնք, հասցե գ Ղուրսալի,
հեռ.098586276 էլ. փոստ՝ ghursali.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» օգոստոսի 2017 թվական 22-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 22-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ղուրսալի համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 12-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Ղուրսալի համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակչբնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.

2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակչբնակիչներին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ՝ | Կողմ՝ | Դեմ՝ | Ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| 1.Դավիթ Մինասյան | [signature] | | |
| 2.Աբրիկ Ազրյան | [signature] | | |
| 3.Վերգինե Կարապետյան | [signature] | | |
| 4.Աշոտ Մարտիրոսյան | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [signature] Մ.Մինասյան

Կ.Տ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Ղուրսալի համայնքի ավագանու
2017 թվականի օգոստոսի 14-ի N 22-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՂՈՒՐՍԱԼԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1.Գևորգյան Գոռ Սրապիոնի-25.000 /քսանհինգ հազար/ՀՀդրամ, ընտանիքին սոց. օգնություն

ԸՆԴԱՄԵՆԸ 25.000 /քսանհինգ հազար/ՀՀ դրամ:

ՂՈՒՐՍԱԼԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.Մինասյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՂՈՒՐՍԱԼԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ղուրսալի համայնք, հասցե գ.Ղուրսալի
հեռ`. (098)586276

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 14» օգոստոսի 2017 թվականի N 21 -Ն

### ՂՈՒՐՍԱԼԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի «ՂՈՒՐՍԱԼԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 32-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով և 70-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Ղուրսալի համայնքի ավագանին որոշում է.

1. Ղուրսալի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 30-ի «Ղուրսալի համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 32-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1-ից թիվ 6 հատվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1.Աբրիկ Ազոյան | | | |
| 2.Վերգինե Կարապետյան | | | |
| 3.Աշոտ Մարտիրոսյան | | | |
| 4.Դավիթ Մինասյան | | | |

**Ղուրսալի համայնքի ղեկավար՝** **Մ.Մինասյան**